

ներէն ոմանք, իրենց եւ ծնողաց հոգու համար
նէփա քաշեր են... եւ, նորո՞գելու մտքով ելլել
«մազաղաթի պատած մասին կարկտան կցեր
են»...:

«Այսպէս «հոգածութիւն» ունեցող ստա-
ցողներէ մէկը, յիշատակազրեւր է՝ «գլխերին
լրացուցի եւ զաւելին ի բաց ձգեցի»...:

* * *

ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ԲՆՈՐՈՇՈՒՄ

«Ի դառն եւ ՚ի նեղ ժամանակի, ՚ի դառն եւ
՚ի յանհանգիստ ժամանակի, ՚ի դառն եւ ՚ի
նուրբ ժամանակի, ՚ի դառն եւ ՚ի տխուր ժա-
մանակի, ՚ի դառն եւ ՚ի վշտալից ժամանակի,
՚ի դառն եւ ՚ի վշտաբեր ժամանակի, ՚ի տար-
տարոս, ՚ի դառնացեալ, յանբարի վշտահար,
դժնեայ, յամենեւին չար, ՚ի պատուհաս, ՚ի
դառնաշունչ, ՚ի դժնէարեւր, ՚ի խաւարամած
ժամանակի»ներու մէջ կատարուած գրչագրա-
կան աշխատանքները, ուր չեն խօսուիր անձ-
նական ու ընտանեկան «աննպատակ եւ դժուարացուցիչ»
պայմաններու մասին, աւելի ար-
ժանի են մեր յարգանքին: Անոնք մեր ազգի
գերազանցութեան փաստերն են: Թէկուզ աշ-
խարհը քանդուի՞, մերոնք չեն լքեր աշխիւր,
ազնուութիւնն ապացուցող գրադումը, եւ կա-
տարած են, թէկուզ խանգարիչ պարագաներու
բերումով թերացած, գործեր ի փառս՝ ես կ'ը-
սեմ՝ մեր ցեղի եւ ազգի:

Յիշեցէք միշտ, որ գեղարուեստները ազգի
մը գերազանցութեան անխաբ չափանիշներն
են:

* * *

ՀԱՅ ԳԻՐՔԸ ԴԺՈՒԱՐ ՕՐԵՐՈՒ ՄԷՁ

Անկասկած է, որ գրչութեան եւ մագա-
ղաթները պատկերագրագելու արուեստը, ինչ-
պէս մշակոյթի ալ ճիւղեր, մէկ մէկ երեսի
վրայ է մնացած Հայաստանի մէջ՝ նորմալ
կեանքը շուտ շուտ խռովող պատերազմներու
եւ արչաւանքներու օրերուն:

«Գրքի արտիստները» առհասարակ շատ եւ
միշտ կը յիշեն «ծանր օրերը»: Եւ արդարեւ
պատիւ է մեր ազգին համար, որ մեր գրիչնե-
րը՝ մինչեւ իսկ բնաւեր եղած, փախտակաւ,

աստանդակաւ կամ տարագիր սակայն ձեռքէն
բաց չեն թողուր իրենց սիրած գործը:

Լսեցէք քանի մը ինքնակենսագրութեան
կտորիկներ —

*

«Չունէաք խաղաղութիւն — կը գրէ Ղա-
զար անունով մէկ գրիչ — կէս մի յայտ քա-
ղաքս գրելով, կէս մի ալլ քաղաք գրելով եւ
այսպէս շրջագայելով աւարտեցաք»:

*

Ուրիշ մը. «Ոչ գոյր տեղի անգործոյ ի մի
վայր, գրեալ եղեւ մաս ինչ ի Սիս եւ մաս ինչ
ի ձոխաթն... եւ մաս ինչ ի սուրբ ուխտն
Կիպր»:

*

«Փախստական յաստ եւ անդ գաղտագողի
չրջելով»: Պետրոս Ջահկեցի:

*

Վենետիկի Մխիթարեանց (հաւաքածոյին
մէջ գրչագիր մը կայ՝ «Մեկնութիւն թղթոց
Պօղոսի Առաքելոյ», ուր ընդօրինակողը Եփ-
րեմ (999) կ'ըսէ, թէ «Աշխատանքին մէկ մասը
Հաղբատում, մնացեալն էր Կողովտում» կա-
տարեր է:

*

«Կենօք տառապանօք» եւ «բաղում պան-
դըխտութեամբ» դարձուածքը յաճախակի է
Վասպուրականի ձեռագիրներուն մէջ:

*

«Ի մէջ դարիբութեան».

«Ի դարիպութեան».

«Ի դրունս օտարաց».

*

«Մի մեղադրէք՝ տեղիս վատ է եւ գրիչն
կու փակչէք, եւ գեղկելի եւ զփցուն գրիչս յի-
շեցէք»:

*

«... եւ գրոյրն իմ Հեղինան եւ զըռուտըն
իմ զկրկին Հեղինան որ հանգեալ ի Քրիստոս
ՌՃՁ, արար աղեխարչ զգառամեալ ծերս ան-
մխիթար, որ եղեւ վասն մեղաց իմոց: Եւ հուսկ
յետոյ տկարս մարմնով, ալլ եւ հոգով յետ-
նեալս ի ժամանակաց ես Այլքսանոս գրիչս ի
ձերութեան ժամանակիս, հաւաս կալայ, որ
աչքս վատնեալ, որ ակնոցով հաղիւ կարէի
նկատել, եւ ձեռս դողայր, որ ի գրել եւ ի